ա) Պատմության ոճական ընդգրկումները. պատմիչը, գրողը, ժամանակագիրը

Դավրիժեցու պատմագրքի ժանրային նկարագիրն ու կառուցվածքային օրինաչափությունները պայմանավորել են համապատասխան ոճական ընդգրկումներ: Վկայագրվող իրադարձության բովանդակությամբ, այդ իրադարձության շուրջ Դավրիժեցու տեղեկացվածության մակարդակով պայմանավորված՝ առաջ են մղվում կամ պատմիչը, կամ գրողը, կամ ժամանակագիրը: Թեպետ, ընդհանուր առմամբ, Դավրիժեցին թե՛ պատմիչ է, թե՛ գրող և թե՛ ժամանակագիր: Սա հատկապես ուշ միջնադարի պատմագրությանը բնորոշ ոճական ընդգրկումների համակարգ է:

Ոճական այդ ընդգրկումների տարբերությունները հատկապես ակնառու երևում են աղբյուրներից օգտվելու դեպքերում: Դավրիժեցու աղբյուրները հիմնականում մանր ժամանակագրություններն են ու ականատեսների պատմությունները, որոնք նա գրի է առել: Եվ պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ Դավրիժեցին շատ հազվադեպ է նշում օգտագործած աղբյուրը և ապա՝ օգտագործելուց էլ փոփոխում է, լրացնում նրանում առկա տվյալները: